



Մրբազրուութիւններ կը կատարէ Հր. Անտանի «Արժանապատեան Բարձրան»-ին եւ Հ. Վ. Հայրենի «Ուղղազրուութիւն եւ Առողջանութիւն Հայերէն» մէջ:

3. ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

1. Արեղեան Արտաշէս, Հայ մշակոյթի սկզբնաւորութիւնը (Ս. Գրքի հայերէն թարգմանութեան 1500ամեակի առթիւ): Հայերէնի քաջ մաս., ԺԳ., Թ. 6, 110—122:

2. Արեղեան Մանուկ, Մասնայ ծոկեր: Գրութ. ՀԱ, 1936, էջ 408—410 (Հ. Պ. Կասպարեան): Հայերէնի քաջ մաս., ԺԳ., Թ. 10, 171—175 (Ա. Արեղեան):

3. Արուստէ Իլիա, Ձվէլի սովորութիւնները (Հին հայերէնի հատուկ վրացերէն): Տիգրա, Հրատ. պետ. Համալսարանի, 1935, 8<sup>0</sup>, էջ 183: Գին՝ 10 ուրբ:

Հատուկ կարգով կը հետեւին համառոտ բարձր եւ հոլովման ու խոնարհման աղիւսակներ:

4. Adontz N., Sur la date de l'Histoire de l'Arménie de Moïse de Chorène. Byz 11 (1936), 97—100.

Կը ջանայ ցուցնել որ Լեւիի գլխաւոր ապացոյցներն իսկ խախտու են (տե՛ս վարք Թ. 14 եւ 15):

Նոյնը հայերէն թարգմանութեամբ. Արմնց Ն., Մովսէս Խորենացու «Հայոց Պատմութեան» թուականի մասին: Սիօն, Ժ., 335—336:

5. — — A propos de la note de M. Lewy sur Moïse de Chorène, Byz 11 (1936) 597—599.

Այս յօդուածով Լեւիի բոլոր ապացոյցները զրկել կը ցրէ:

6. Արմնց Ն., Փոքր Սոկրատի հեղինակը: Սիօն, Ժ., 300—304:

Հեղինակին եզրակացութիւնն է. «Մեծը թարգմանուած է Պարտոմ 696 թուին Փիլոնի ձեռքով, Փոքրը խմբագրուած է Մեծից Յակոբ Ուսայեցու աշխատութեամբ ԺԲ. դարում»:

7. Արաբեան Ն., Քննական տեղեկագիր ի մասին Ս. Կանայեանի «Բաջանց տուն (Արշակունիք)» ժողովրդական վէպի: Սիօն, ԺԱ., 20—23:

8. Basmagian K. I., Aniversaria de 750 ani a unui medic (Բիշկի մը 750ամեայ յորելեանք. ուսմ): Ani, Ա. տ., պր. Գ. 10—16:

Միթիթար Հերացույ մասին է:

9. Եղիվարդ, Ներբողական ճառ Երանելոյն Ներսէս Լամբրոնացու ի հրաշափառ Գալուստ Ս. Հոգւոյն: Սիօն, Ժ., 202—207:

Աշխարհարարի թարգմանութիւնն է:

10. Gavakhišvili Iv., Dzueli somkhuri saistorio mdserloba (Պատմութիւն հին մասենազրութեան Հայոց վրացերէն): Հատ. Ա. Տիգրա 1935, 8<sup>0</sup> էջ XV + 216. Գրախ. AB 1936, էջ 397—401 (P. P[eters]).

11. Hugon Paul, Pater hēmōn. Los Angeles (Calif.), Leon R. Ervin, 1936, 8<sup>0</sup>, էջ 53:

«Հայր մեր» թարգմանութիւնն է 41 հին եւ նոր լեզուներու պատմական եւ լեզուաբանական ծանօթութիւններով:

12. Iorga N., Ceva despre poezia din Evul Mediu (Անկնարկ մը միջնադարեան Բանաստեղծութեան վրայ, ուսմ.): Ani, Ա. տ., պր. Գ. 35—39:

13. Leroy M., La traduction arménienne d'Euclide.

Արատու. Annuaire de l'Institut de Philologie et d'Histoire Orientales et Slaves, IV (1936) 785—816.

Եւղիլիդէսի հայ. բնագիրը Պաւլիայի ձեռագրէն (Cod Ticinensio Aldiniano 178 [ԺԳ.—ԺԵ. դար]) կրկին անդամ կը հրատարակուի: Կը պահուի Ա. մասն, որ ՀԱ-ի մէջ երեւցաւ (տե՛ս 1937, 225—242):

14. Lewy H., The date and purpose of Moses of Chorene's history. Byz 11 (1936) 81—96. Հեղինակս կը փորձէ Խորենացու պատմագրութեան ժամանակը դնել 876—885 տարիներուն:

15. — — An additional note on the date of Moses of Chorene. Byz 11 (1936) 593—596.

Արմնցի ընդլրմագրութեան դէմ:

16. — — The Pseudo-Philonic de Jona. Part I; Studies and Documents հրատ. Kirsopp Lake and Silva Lake. Vol. VII. London, Christophers 1936, 8<sup>0</sup>, էջ 24 + 49.

Փիլոնի վերագրուած հայ. բնագիրը քննադատական ուսումնասիրութեան յետոյ կը հրատարակուի:

17. Ծովակաճ, Ժողովուրդի հին հայ թարգմանութիւնները: Սիօն, Ժ., 45—48:

Չոհրապետ եւ Ոսկանի սուղարկ բնագիրներու եւ ինչ ինչ տեղ յունարէնի հետ համեմատութեան ծանօթ կարծիքին կը յանդի թէ «մեր առջեւ ունինք Ժողովուրդի երկու հին եւ ուրոյն թարգմանութիւններ»:

18. — — Սիրարայ հին հայ թարգմանութիւնները: Սիօն, Ժ., 150—153:

Ընդհանուր համեմատութիւն մը:

19. Հացունի Է. Վարդան, Պատարագամտոյց բոս արարողութեան Հայաստանայց Եկեղեցու: Վեներիկ, Ս. Ղազար, 1936, 8<sup>0</sup>, էջ 166: Գին՝ 6 գր. Փր.:

Ա. Տեղեկութիւնը, էջ 1—26 թիւ պատարագի մասին, որուն կը յաջորդէ թիւ պատարագի բնագիրը, իսկ էջ 77—121 (Բ. Տեղեկութիւնը) ձայնուոր պատարագի մասին է իր առանձին բնագրով:

20. Պոյախեան Ս. Յ., Պատմահօր Խորենացիի քանի մը բառերու մասին խոնարհ կարծիք մը: Ապագայ, ԺԶ., Թ. 100 (13 մարտ 1936), Թ. 110 (25 մարտ 1936):

Նիւթն է՝ արտադատութիւն, որ կը մեկնէ իրրեւ «արտաբոյ դատողութեան», hors de raison, d'intelligence, de logique, մանուածող իրրեւ «յերիւրածոյ, փեղկոյն», absurde, եւ ախտարւոյն (պ) իրրեւ «ատոգահմայ, ստողադուշակ»:

21. Սարուխան Ա. Ֆիրդուսի եւ Մովսէս Խորենացիի Firdowci et l'influence iranienne dans la littérature géorgienne [Ազգային Մատենադարան, ձԼԸ]: Վեներիկ 1936, 8<sup>0</sup>, էջ 106: Գին՝ 1 գ. Փր.:

Գրախ. Վէմ, 1936, Թ. 3, 121—123 (Յ. Չ[արեան]). Հայերէնի քաջ մաս., ԺԳ., Թ. 11, 176 (Ա. Ա[րեղեան]):

Մինչեւ էջ 62 հայ. բնագիրն է. իսկ մնացած մասը կը գրուէ գաղղ. լեզուա խօսած ճառը Պարիսի «Cercle des Etudes Caucasiennes» ակումբին մէջ,

ուր կը պարզէ իրանեան ազդեցութիւնը վրական մատենագրութեան վրայ:

22. Միլիվանցիի Ֆրէտերիկ Հանրի Ամրոց. Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան մասին: ԲԶՄ, ՂԳ., 55—59:

Տեղիքս յատուկ կը բերուի հեղինակին «Նոր կտակարանի քննութեան ներածութիւն»էն, Բ. հատ., էջ 148—153 (Լոնդոն 1894):

23. Քիւրտեան Յ., Քուշակեան երեք նոր տաղաչարքեր: ԲԶՄ, ՂԳ., 91—93:

Այս երկու տաղերն, որոնք արդէն լոյս տեսած են, որոշ տարբերակներուն պատճառաւ կրկին կը հրատարակէ հիմ առնելով Հայկ. թ. 121 ձեռագիրը 1743 տարին (տե՛ս Սիրմէկեան Յուլիան): Ա. Տաղի վերայ խելաց եւ իմաստութեան ասացելով. «Մէկ մարդ մի ճուհար ունէր...»: Բ. Տաղի վերայ խելաց որ է սիրուն. «Աւաղ մեկ հայել պիտի...»:

24. Wikgren Allen, Brief communications Armenian Gospel MSS in the Kurdian Collection Journal of Biblical Literature, Հատ 55, Մաս Բ. (1936), 155—158.

Քիւրդեանի սեպհական հաւաքածոյի 8 տեսարաններու նկարագրութիւնն է:

4. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

1. Abdalian S., Le Zanguéour sismique. Արատու. Bulletin du Laboratoire de Géographie physique de la Faculté des Sciences de l'Université de Paris. Tome VIII. Fasc. 1. Paris, Société de Géographie phyhique. 8<sup>e</sup> էջ 52, 10 պատկեր եւ 4 սախտակ:

Հեղինակն իրրեւ մասնագէտ կը ներկայացնէ այս հմտալից դործն առիթ առնելով 1931ի Ապրիլ 27ին պատահած զարհուրելի երկրաշարժն, որ 150-000 մարդ անպատասխար ձգեց: Իրրեւ յաւելուած կը ներկայացնէ ամփոփ կերպով նաեւ անցեալին մէջ Հայաստանի զեանի վրայ տեղի ունեցած բոլոր երկրաշարժերը տալով նաեւ դործած աւերներուն թուերը:

2. Акоюн А. А. — Кянджецяя Р. Н., Справочник по курортам и домам отдыха ССР Армении.

(Առաջնորդ Նորհրդային Հայաստանի ջերմուկներու եւ ամառանոցներու համար): Երեւան, Պետհրատ, 1935, 8<sup>0</sup>, էջ 300: Գին՝ 2 ուրբ. պատկերազարդ եւ մէկ աշխարհագրական սախտակ: Էջ 213էն սկսեալ նոյնը գերմաներէն լեզուով է ներկայացուած:

3. Աղարաբեան Գրիգոր Յ., Արիւմիւնիւմը Հայաստանի մէջ: Թէհրան, տպ. «Փարոս», 1935, 8<sup>0</sup>, էջ 38: Գին՝ 8 Փր.:

4. Gottwald J., Die Kirche und das Schloß Paperon in Kilikisch-Armenien. BZ 36 (1936), 86—100. 4 պատկ. եւ 3 ուրուագիծ:

Պապերոնի պատմականը տալէն Եսէր կը խօսի Եկեղեցւոյն եւ գղեակին ճարտարագիտութեան մասին:

5. Ingigian Hugas Pär., Dobrogea și Basarabia descrise de geografii armeni (Գորբուջա եւ Բեսարաբիա նկարագրուած հայ աշխարհագիրներէն, ուսմ Ani, Ա. տ., պր. Գ., 64—69:

Բաղուածարար առնուած Ինճիճեանի Նոր Հայաստան ծանօթ դործնէն:

6. Kamsarakan Peter, Die Wirtschaft Armeniens. Petermanns Geogr. Mitteilungen, 1937, պր. 7/8, 206—209:

Կը խօսի ներկայ Հայաստանի տնտեսական արդիւնաբերութեան մասին:

7. Մանանդեան Յակոբ, Հայաստանի գլխաւոր ճանապարհները բոս Պետրոգրեան քարտէզի: Երեւան, տպ. Պետհրատի [Հրատարակութիւն Մեքրենեան Ֆոնդի], 1936, 8<sup>0</sup>, 272 էջ: Գին՝ 42.50 Փր.:

Գրախ. OLZ 1938, 174 (K. Mlaker).

Նկատի առնուած են՝ Արտաշատ-Ստապղ, Արտաշատ-Տիգրանակերտ, Արտաշատ-Արատուոյլիս, Արտաշատ-Սոյ-Պարեանկա եւ իրրեւ Յաւելուած՝ Դուին-Պարտաւ: Ուսումնասիրութեան հիմնական եզրակացութիւնները կը ներկայացնէ նաեւ ուսերէն եւ գերմաներէն:

8. (Տէր-Մովսէսեան) Մետրոպ Մագիսարոս Արեւիկ., Պատմական տեղեկութիւններ Հայաստանի հողերի ոռոգման մասին: Սիօն, Ժ., 49—55, 78—82, 140—145, 181—186, 276—279, 305—309:

Հատաբերական ուսումնասիրութիւն, ուր ամփոփուած են կարեւոր տեղիքները:

9. — — Նոյնը նաեւ առանձին հատորով լոյս տեսած այս խորագրի տակ. Պատմական տեղեկութիւններ Հայաստանի հողերի ոռոգման մասին: Հնագիտական ուսումնասիրութեան նախընթաց եւ յիշատակարաններ: Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեանց, 1936, 8<sup>0</sup>, էջ 142: Ամմատուէլ:

10. Oberhammer Eugen, Armenische Geographie. Mitteilungen der geogr. Gesellschaft in Wien. 79 (1936) 97—102.

Կը շեշտուի հայ մատենագրութեան մեծ նշանակութիւնն աշխարհագրական տեսակէտէ:

11. (Սիւրմէկեան) Արտաշատ Արեւիկախոս, Պարտաւ Բերդը — Մեր արշաւանքը բերդին մէջ. Պատմականը: (Արատու. «Հ. Կոշնակ»էն): Հայկ. տպ. Տէր-Մահակեան, 1937, փոքր 8<sup>0</sup>, էջ 59:

Սեւե կամ Ամանոս լեռանց հարաւային գաւիթափին վրայ գտնուող կիսաւեր բերդին նկարագրութիւնն է:

5. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1. Abeghian Artases, Tipuri nordice la Armeni (Հիւսիսային տիպեր Հայոց քով. ուսմ.): Ani, Ա. տ., պր. Գ., 3—8:

2. Արմնց Ն., Քննական տեղեկագիր ի մասին Տ. Գարեգին Արեւիկ. Յովսէփեանի «Հողերու կերպներ եւ Գլածարի բարձր գարոցը» ուսումնասիրութեան: Սիօն, Ժ., 266—272:

Գնահատական է:

3. Ագաւեան Գարեգ, Հայաստան եւ Յոյները: Հայերէնի քաջ մաս., ԺԳ., Թ. 3, 85—96: Հմտ. ՀԱ, 1936, էջ 427, Թ. 116:

Ընդհանուր ակնարկ միջին դարու, մասնաւորապէս Բաղրատունեաց շրջանին վրայ:

4. Ալպոյաճեան Ա., Գրեղոր Կեսարացի Պատ-  
րիարք եւ իր ժամանակը: Ս ի ո ն, Ժ., 55—61, 82—  
86, 146—150, 187—191, 280—283, 309—314, 349—  
351:

5. — — Նոյնը նաև առանձին հատորով ար-  
տատուած:

Գրեղոր Կեսարացի Պատրիարք եւ իր ժամ-  
նակը: Եկեղեցապատմական ուսումնասիրութիւն:  
Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեանց, 1936, 8<sup>o</sup>, էջ 247:  
Անմատչելի:

6. Աղաւնունի Մկրտիչ Եպս., Տաղանակի Եկե-  
ղեցին Կարիթաթարի մէջ: Ս ի ո ն, Ժ., 177—180:

7. — — — Ս. Պրոկոպիոսի Եկեղեցին Երուսա-  
ղէմի մէջ: Ս ի ո ն, Ժ., 20—22:

8. — — — Ս. Մովսէս Մարգարէի Եկեղեցին  
զիւար Նաբաւ լեռան վրայ: Ս ի ո ն, Ժ., 75—77:

9. — — — Իպլէնները եւ անոնց շինած Եկեղե-  
ցին: Ս ի ո ն, Ժ., 109—113:

10. Աճէմեան Հայկ, Պատմութիւն Արամեան ազ-  
գային զարոյցի Թաւրիզ Հարիւրամեայ Յորեւեանին  
առթիւ 1835—1935: Թաւրիզ, Ասորպատականի Հայոց  
Թեմական Տպարան, 1936, 8<sup>o</sup>, էջ 100: Գինն՝ 5 ռիալ:

11. Araz, Datine de Paşti (Չատկական սո-  
վորութիւններ ուսմ.): Ani, Ա. տ. պր. Գ., 37—43:  
Հին հայերէն երգեր ալ ուսման. թարգմանու-  
թեամբ յտաղ կը բերուին:

12. — Cum sărbătoresc Paştele Armenii dela  
noi (Թէ այսօրուան Հայերը Չատկին ինչպէս կը սո-  
նեն. ուսմ.): Ani, Ա. տ. պր. Գ., 44—47:

13. — „Vartavar“. (ուսման.). Ani, Ա. տ.,  
պր. Բ., 21—25:

Վարդավառի առթիւ ժողովրդեան մէջ տեղի ու-  
նեցած զանազան խաղերու եւ սովորութեանց մասին  
կը խօսի:

14. Արսլանեան Գ. Արքեպ., Պատասխաներ Լու-  
սածիր շարաթացեալ վանքերէն: ԲՁՄ, ՂԴ., 37—40:

15. Attwater Donald, The Catholic  
Eastern Churches. London 1935, 8<sup>o</sup>, էջ XX + 308:  
պատկ. Գինն՝ 3 տրլ:

Կը բաղկանայ 11 զլուխներէ. ութերորդ զլուխը  
հայ ծէսի մասին է:

16. Avakian Gr., Bogdan P. Hasdeu și stu-  
diile armenesti în România (Բողզան Պ. Հասդէու  
եւ հայագիտութիւնը Ռումանիոյ մէջ. ուսմ.): Ani,  
Ա. տ., պր. Բ., 77—81:

17. Աւգբը Հ. Յ., Ս. Գրեղոր Լուսաւորչի  
նշխարները Եւրոպայի մէջ: ԲՁՄ, ՂԴ., 153—154:

18. Բակ [Բարկէն Ա. Կաթողիկոս Կիւլէտէրեան].  
Հայ-Կիւրոս. Հայ գաղութը եւ Ս. Մակար: Անթի-  
լիաս, տպ. Դարեկվանուց, 1936, 8<sup>o</sup>, էջ ԺԶ + 271:  
Գինն՝ 5 շիլլին (29 պատկերներով):

Կիւրոսահայ գաղութին կեանքը կը ներկայացնէ ա-  
մէն տեսակէտէ. դազութիւն ծագումը կը վնասէ  
ԺԳ. դարէն շատ յտաղ: «Վասերագրեր» բաժնին  
մէջ կը հրատարակէ յիշատակարաններ Նիկիոսիոյ Ս.

Աստուածածին Եկեղեցոյ անօթներէն, սպասներէն,  
ձեռագիրներէն եւ այլն:

19. Բասմաչեան Կ. Յ., Հայկական ընդհանուր  
Դրամագիտութիւն եւ Հայաստանի վերաբերեալ դրամ-  
ներ: Վենետիկ 1936, 8<sup>o</sup>, էջ 226 (140 պատ.): Գինն՝  
40 Ֆր. Ֆր.:

20. Dauvillier Jean, — De Clercq  
Carlo, Le mariage en droit canonique oriental.  
Préface de Gabriel Le Bras. Paris, Recueil Sirey,  
1936, 8<sup>o</sup> էջ XI + 238.

Գրախ. Orientalia Christ. Period. 3  
(1937) 699—700 (E. Hermann S. J.).

21. Dumézil Georges, Sărbătorea pri-  
măverii la Armeni (Գարնանային առնամարտութիւններ  
Հայոց քով. ուսմ.): Ani, Ա. տ., պր. Գ., 55—58:

22. Երեցեան Մ., Հայ դրամագիտութեան հա-  
մար շահեկան կտոր մը: ԲՁՄ, ՂԴ., 35—36:

Կը խօսի Պարիսի Նուպարեան Մատենադարանին  
վերջերս նուիրուած արծաթեայ դրամի մը մասին, որ  
կը կրէ «Է Ի Է...» արարական նուիրական ասա-  
ցուածքը: Դրամի առաջակողմեան արձանագրութեան  
«Լեւոն թա...» կարդալով կը վերագրէ Լեւոն Ե.ի  
(վերջինը Լեւոն Զ. հաշուելով): Իսկ արար. ասա-  
ցուածքը մեկնելու համար կ'ենթադրէ իրբու հաւա-  
նական, որ Կիլիկիան հայ իշխանութեան վերջին  
չըջաններուն Հայերը Եզրպոստի Սուլթաններուն կամ  
անոնց Բերիոյ տեղակալներուն հատուցուելիք պատե-  
րագական տուգանքը կամ տարեկան հարկը վճա-  
րուած է չըջարներութեան մէջ զանուոյ արծաթ դրամ-  
ներով ալ, իսկ զանոնք ստացողները փոխանակ ձու-  
լելու եւ նոր արձանագրութեամբ նորեր տպելու, դո-  
հացած են միայն իրենց նուիրական ասացուածք «Է  
Ի Է...» զրոյմելով վրան, այնպիսի ձեւով մը որ  
խաչը եղծուի:

23. Չարդարեան Վահան, Յիշատակարան (1512—  
1933). Գ. հատոր: Գահիրէ, Գրատուն Վահան Չար-  
դարեան, 1935, 8<sup>o</sup>, էջ 180 (96 պատկերներով):

Հատորս կը գրուեն՝ Պալեան դերգաստանէն  
եօթը շատաիղներ, Գոճա Սինան Գալֆա, Գրեղոր  
Օտեան, Մկրտիչ Պէշիկթաչլեան, Աղա Յովհ. Բարի-  
կեան, Առաքել Տաս Ամիրա Չատուպեան, Տ. Կոմի-  
տաս քհնյ. Բէժմիւրճեան, Տօբթ. Քեաթիպեան,  
Յովհ. Կոլոտ Պատրիարք, Գրեղոր Շղթայակիր Պատ-  
րիարք, Յարութիւն քհնյ. Շմառնեան եւ Յովսէփ Իզ-  
միրեանց:

24. Friedrich Johannes, Chalder oder  
Urartäer. ZDMG, Հատ. 90, պրակ 1, էջ 60—82.  
Lehmann-Hauptի հակառակ կը պաշտպանէ թէ  
Խաղի, Խաղիմա, Խաղիա անունները զոյութիւն  
չունին եւ հետեւաբար Վան-Տոսպի նախահայկական  
ժողովուրդը պէտք է ասորեստանցիներու կողմանէ  
գործածած Ուրարտացի (Ուրարտու) անունով յոր-  
ջորջել:

25. Gokian P. S., Armenia in Sf-ta Scrip-  
tură (Հայաստան Ս. Գրքի մէջ. ուսման.): Ani, Ա.  
տ., պր. Գ., 9—13, պր. Գ., 1—4:

26. Guerdan L. G., Impărăți armeni in  
Bizanț (Հայ կայսրներ Ի Բիզանդիոն, ուսմ.): Ani,  
Ա. տ. պր. 3, 51—56:

Կը թուէ 11 կայսրներ:

27. — — — Impărătese de sânge armean  
(Հայազգի կայսրուհիներ, ուսմ.): Ani, Ա. տ. պր.,  
Գ. 40—48:

Բիզանդիոնի հայազգի կայսրուհիներու մասին է.  
թուով 9 են:

28. Hančar Franz, Roß und Reiter im  
urgeschichtlichen Kaukasus. Jahrbuch für prähis-  
torische und ethnographische Kunst. 1. Bd. (1935),  
S. 49—65.

Նախապատմական Կովկասի մէջ ձին եւ ձիաւորը  
չառ ուչ եւ ցանցառ ներկայացուած կը գտնենք: Հե-  
ղինակն այս պարզապէս կը մեկնէ իրը կրօնական  
ըմբռնման արդիւնք, այսինքն արգասաբերութեան աս-  
տուածութեան պատկերացումն, որուն պաշտամուն-  
քին պէտք եղած տնտեսական ու բարոյական պայման-  
ներն ստեղծեց մետաղի առեւտուրով կերպարանափո-  
խուած անասնաբուծութիւնը (Ն. Բ. 2000ի վերջերը):

29. Հացունի Հ. Վարդան, Հայուհի պատմու-  
թեան առջեւ: ԲՁՄ, ՂԴ., 147—151:

Ընդ մամուլ գտնուող գործերն ըստանդակու-  
թիւնը կու տայ, որ կը բաղկանայ 18 զլուխներէ:

30. Janin R., Les Eglises orientales et les  
rites orientaux. Գ. տպագ. Paris, Maison de la  
Bonne presse, 1936. էջ 8<sup>o</sup> X + 646. 58 պատ. եւ  
8 քարտէս. Գինն 15 Ֆր.

31. Իրազիկ, Նշանաւոր կիները Հայոց անցեալ  
պատմութեան մէջ: Հայրենիք ամս., ԺԴ.,  
Թ. 9, 56—83. Թ. 10, 83—114:

32. Kuşaghian Arhiepisc. Torcom,  
Poliect și origina sa armeană (Պաշիկոտս եւ անոր  
հայկական ծագումը ուսմ.): Ani, Ա. տ. պր. Գ.  
49—54:

Կ'ապացուցանէ թէ Corneilleի համանուն ողբեր-  
գութեան զիւցաղն հայազգի է Մելիքիսէէն, որ Գե-  
կոսի ժամանակ մարտիրոսացած է ըստ վկայարանու-  
թեան:

33. Lehmann-Haupt C. F., (in Verbin-  
dung mit F. Bagel und F. Schachermeyr), Corpus  
inscriptionum Chaldicarum. Textband: 2. Lieferung  
nebst Supplement zur 1. und 2. Lieferung. Tafel-  
band: 2. Lieferung. Berlin, W. de Gruyter & Co.,  
1935. Գրախ. WZKM, 44 (1937), 151 (J. Sturm).

Հրատ. մինչև Թիւ 110. Միջուտի թագու-  
րութեան շրջանն ամբողջական է:

34. Macler Frédéric, Allocution pro-  
noncée le 11 mars 1934 au Collège arménien Sa-  
muel Mouradian à Sèvres (S.-et-O.) Paris, Adrien  
Maisonnette, 1936, 8<sup>o</sup>, էջ 45:

Կը շօշափէ հայ-գաղղիական յարաբերութիւնները  
նաև քաղաքակրթական տեսակէտէ:

35. Մագունեան Նուպար, Հեթանոս Հայաս-  
տանը: Հայրենիք ամս., ԺԴ., Թ. 4, 72—87:

36. Մագունեան Նուպար, Հայկական հին ու  
վաւերական դրամներ, Հայրենիք ամս., ԺԴ.,  
Թ. 9, 134—137:

37. — — — Հոբերար Առիւծաբեր եւ Լեւոն Մե-  
ծագործ: ԲՁՄ, ՂԴ., 98—105:

38. (Յովսէփեան) Գարեգին Արքեպիսկոպոս, Նու-  
րազիւտ հայերէն մի կարեւոր արձանագրութիւն Ան-  
բերդի մէջ: Ս ի ո ն, Ժ., 372—374:

Անբերդ կամ ներկայ ժողովրդական արտասանու-  
թեամբ Համբերդ ամրոցը՝ Արաղածի հարաւային լան-  
ջին վրայ, զոր Չաքարիա Մեծ կը նուաճէ եւ կը յանձ-  
նէ վաշտակներու նախօրը ժառանգական իրա-  
ւունքով: Գիւտն եղած է 1922ին Հայաստանի գիտական  
ինստիտուտի կողմանէ կազմուած փոքրիկ ուսումնա-  
սիրական արշաւին վախճանն, որուն մասնակցած է  
նաև Յօղուածագիրս: Մինչ Թորմանեանը կը կար-  
ծէր թէ զղեակը ԺԱ. դարու, իսկ Եկեղեցին ԺԳ. դա-  
րու գործ է, հեղինակը կը գտնէ բաւական դժուար-  
ընթեանի արձանագրութիւն մը, որուն համաձայն  
Եկեղեցին շինուած է ՆՇԵ = 1026ին:

39. Ն(շաքեան) Մ(երսոյ) Ե(պս), Սուրբ Յա-  
րութեան Տաճարի շինութեան եւ նաւահատեայ հա-  
զարհնոց հարիւրամեայ տարեկարծը: Ս ի ո ն, Ժ.,  
106—109:

40. Նուպար, Աւետարանի մոզերը եւ Հայոց պատ-  
մութիւնը: Ս ի ո ն, Ժ., էջ 17—19:

Կը յիշէ աւանդութիւնն, որուն համաձայն մո-  
զերը հայ են եւ այն Մոկայ աշխարհէն եւ Dietrichի  
ենթադրութիւնն, որ հիմ առնելով Դիոն Կասիոսի եւ  
Պլինիոսի պատմածները Հայոց Տրդատ Ա.ի Հոռոմ  
երթալու մասին (66ին) մոզերու գալուտի նկարա-  
գրութիւնը Մատթէոս Աւետարանէի քով Տրդատի այս  
ճանապարհորդութեան նկարագրութեան արձագանգը  
կը համարի: Հեղինակը փաստերով կը հերքէ այս  
ենթադրութիւնը:

41. Roth Karl, Despre rasa și caracteris-  
tica poporului armean (Հայ ժողովրդեան ցեղն ու  
նկարագրերը. ուսման.): Ani, Ա. տարի, պր. Բ.  
9—14:

42. Պայազաւ Արգար, Խաղերէն լեզուի բանալին  
(հայերէն եւ ուսերէն): Երեւան, Պետհրատ 1936,  
8<sup>o</sup>, էջ 100: Գինն՝ 2-50 ու.:

Հիմ առնելով Մ. Նիկիտիկիի եւ Մեշչանինովի  
ընթերցումները կը փորձէ ապացուցանել թէ խալ-  
դեան կամ ուրարտեան բեւեռագրերու լեզուն նոյն է  
այսօրուան Ուտի-Ալթայներուն կամ ըստ հայ մատե-  
նագիրներուն Աղուաններու լեզուին հետ եւ ըստ այսմ  
Ուրարտացիները կ'ըլլան վերջիններու նախահայ-  
րերը: Հեղինակը կը համարի թէ իր «այս գիտութեան  
զարեկանը, Կովկասի, Անդրկովկասի եւ առաջաւոր  
Փոքր-Ասիայի նախկին իշխողները եղել են Սկիթա-  
կան ցեղերից նաև Ուտի-Ալթայները»: Ասոնք մեր  
թուականէն մօտ 2000 տարի առաջ մաս մաս շար-  
ժուելով «հետո արեւելքից», կը տիրապետեն վե-  
րայիշեալ երկիրներուն մինչև որ գարեբու ընթացքին  
տիրաբնակով տեղի կու տան նոր ցեղերուն, այսպէս  
Գ.—Ե. գար Ն. Բ., «Երբ ասպարէզ են իջնում Ար-  
մէնները»: Այս կերպով կ'եզրակացնէ. «Բիւնայում

Թուլացած աղուանները պէտք է կենդանանային Գուգարբում, Սեւանյ լճի աւազանում, Սիւնիքում, Արցախում եւ Կուրի հսկայական հովտում, Յոր-Արագան գետերից սկսած մինչեւ Կասպիական ծովը, Արաքսից սկսած մինչեւ Կովկասեան լեռնաշղթան, որը հաւանական մի ժամանակ Մենուաների, Սարգուրների... հսկայական պետութեան մի մասն էր կազմում» (էջ 5): Հայ պատմագիրներու քով յիշատակուած Գարգանները, Գարգարները, Գուգարները, Մովսէլները, Հարճիլները, Պիանները, Վրկանները եւ միւս ցեղերը (Թուով 27) «ոչ այլ ոք են, եթէ ոչ նոյն Ուլի-աղուանների նախորդական տոհմերը միեւնոյն ուղի լեզուով եւ նրա բարբառներով խօսող աղուաններ» (էջ 6): Թէ այս աղուանները բնիկ կովկասցիներ են թէ եկուորներ, հեղինակը պարզած է իր առ այժմ անսխալ աշխատութեան մէջ՝ «Չինարէն ու ուղիերէն լեզուները ազգակցութիւնը»:

43. Սանասար Փայլակ, Թուրքիայի պատմութիւնը: Վէժ, Դ. տ., Թ. 3, 55—63:

Հետեւողութեամբ Colonel Lamouche, Histoire de la Turquie գործին:

44. Սափրաստեան Արշակ, Քսենոֆոնի ուղեգրերը Հայաստանի միջով: Վէժ, Դ. տ., Թ. 3, 64—67:

Կը գրէ Յ. Չ(աւրեան) գրախօսականի (տե՛ս շԱ, էջ 427, Թ. 108) գէժ. սակայն այս հակահասականը չի գտնուած Յ. Չ(աւրեան), ինչպէս հետեւող տողերէն կը տեսնուի:

45. Սէքեան Յ. Մ., Ամենահին քրիստոնէայ շիրմերը Կալկաթայի մէջ: ԲՁՄ, ՂԴ, 94—96:

Հ. Ե. Փ. Թարգմանած է հեղինակին The oldest christian tomb in Calcutta յօդուածը, լոյս տեսած Կալկաթայի The Sunday Statesman օրագրին 1936, փետր. 9 թուին մէջ, էջ 23: Ասկէ կը տեսնենք որ 60 տարի յտանջ քան Անդղիացւոց ժամանումը ձոյլ Չարնոքի առաջնորդութեամբ կը հանդիպէ հոս հայ տիկին մը, որուն տապանաքարին թուականն է 11 Յուլիս 1630:

46. Սիմոնեան Պետրոս, Յուլամատեան-Հոսկա-կան Չմիւռնիան: Փարիզ, տպ. «Արաքս», 1936, 4<sup>թ</sup>, էջ 43: Գին՝ 8 Փր.:

Ամփոփ կերպով կը ներկայացուի Չմիւռնիոյ հոյ-մտաւորական ու ընկերական-բարեգործական կեանքը:

47. Siruni H. Dj., Cronica Culturii Armenene (Հայ մշակոյթին ժամանակագրական պատմութիւնը, ուսմ.): Ani, Ա. տ., պր. Բ, 15—20, պր. Գ, 14—22, պր. Դ, 5—9:

Կը խօսի Արաշէսեան եւ Արշակունեան հարստութեանց եւ քրիստոնէական շրջաններու մասին:

48. Siruni H. Dj., Cronica Armenilor din țările române (Ռումանիոյ Հայոց ժամանակագրութիւնը): Ani, Ա. տ., պր. Բ, 65—74, պր. Գ, 69—75, պր. Դ, 60—63:

49. — — — Georghe Asachi și Armenii (Գէորգ Ասազի եւ Հայերը. ուսմ.): Ani, Ա. տ., պր. Գ, 71—75:

Կը ցուցնէ թէ հայ է ծագումով:

50. — — — N. Iorga, și studiile armenesti (Ն. Եօրգա եւ հայագիտութիւնը. ուսմ.): Ani, Ա. տ., պր. Դ, 82—88:

51. Սիւրմէեան Արտաւազ Արքեպ., Պատմութիւն Հայկի քահանայից: ԲՁՄ, ՂԴ, 88—90:

Շարունակութիւն նախորդ տարիէն (տե՛ս շԱ 1936, 432, Թ. 145):

52. Վաչնաճէ Գալիք, Վրաստանը հիւսիսի եւ հարաւի միջեւ. Հին օրերէն մինչեւ մեր օրերը: Ռուս թարգմ. Վ. Մասիսեան: Հայրենիք ամս., ԺԴ, Թ. 12, 82—104:

53. Van den Oudenrijn M. A. O. P., Bishops and Archbishops of Naxivan. Archivum Fratrum Praedicatorum. Vol VI (1936) 161—216. 1356—1732 կը յաջորդեն իրարու 30 թեմականներ:

54. Տաշեան Հ. Յ., Հաթեր եւ Ուրարտեանք. — Մատենադիտական ուսումնասիրութիւն: Վրեննա 1934, 8<sup>թ</sup>, էջ 343: Գինն՝ 3 զ. Փր.:

Գրախ. Հայրենիք ամս., ԺԴ, Թ. 10, 169—170 (Ա. Ա[րեղեան]):

55. Տոտովեանց Վ., Հայոց դերը համաշխարհային մշակոյթի մէջ: Հայրենիք ամս., ԺԵ. (1936), Թ. 1, 74—85. Թ. 2, 105—113:

Ընդհանուր ակնարկով կը հասնի մինչեւ Ժ. դար (Բիւզանդական շրջանը):

56. Քիւրտեան Յ., Առաջին եւ երկրորդ խաչակրութիւնները ըստ Սիւրիացի անանուն ժամանակագրի մը: Հայրենիք ամս., ԺԴ., Թ. 10, 115—126. Թ. 11, 91—103. Թ. 12, 129—138: ԺԵ. (1936), Թ. 1, 141—149:

IRAS թերթի 1933ի Յունուար եւ Ապրիլ թիւերուն մէջ հրատարակուած The First and Second Crusades from an Anonymous Syriac Chronicle, անգլիերէնի թարգմանուած A. S. Fritton է, հոս հայերէնի կը թարգմանուի:

(Շարունակելի:) Հ. Վ. ԻՆՎԻԶԵԱՆ

Ն Ո Ր Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր  
(Ուղարկուած Խմբագրութեանս:)

Արեղեան Արտաշէս, Ուղղադրական բառարան (դ. տպ.): Շտուտգարտ, տպ. Մաշտոց, 1947, 12<sup>թ</sup>, էջ 260: [Արմենիա մատենաշար Թ. 1:] 14a, Stuttgart-Zuffenhause, Im Salzweg 33, Germany, U. S. Zone.

— — Քերովրէ Պատկանեան Գորպատում: Վրեննա, Միւրիթ. տպ., 1949, 8<sup>թ</sup>, էջ 56: Գին՝ 1 զ. Փր.: [Ազգ. Մատ. ՃԿԱ:]

Ազատեան Թ., Լիբանանի Կուշեր: Իսթանպուլ, 1949, 8<sup>թ</sup>, էջ 224: Գինն՝ \$ 2.50: Billur sek Gül Han No. 9, Galata-Isambul.

— — Մշակոյթ, Ազգադրական տարեգրք: Ա. տարի: Իսթանպուլ, տպ. Պէճիտեան, 1948, 8<sup>թ</sup>, էջ 160: Գինն՝ \$ 3.—: [Մշակոյթ մատենաշար Թ. 16:]

— — Յուլամատեան Գարակէօղեան Որբանոցի (1913—1948): Իսթանպուլ, տպ. Պէճիտեան, 1949, 8<sup>թ</sup>, էջ 151:

Ազատեանի Արապիոն, Տաղեր ու շաղեր, բանաստեղծութիւններ: Շիբութիարա, տպ. Բանբեր, 1949, 8<sup>թ</sup>, էջ 72:

Ալիմեան Հ. Ն., Ս. Մաշտոց վարդապետ, կեանքն եւ գործունէութիւնը, հանդերձ կենսագրութեամբ Ս. Սահակայ: Վրեննա, Միւրիթ. տպ., 1949, 8<sup>թ</sup>, էջ ԺԱ + 473: Գինն՝ 6 զ. Փր.: [Ազգ. Մատ. ՃԾԸ:]

— — Տեսիլ Ս. Սահակայ, մատենագրական-պատմական քննութիւն: Վրեննա, Միւրիթ. տպ., 1948, 8<sup>թ</sup>, էջ Ը + 96: Գինն՝ 1 զ. Փր.: [Ազգ. Մատ. ՃԾԷ:]

— — Քրիստոնէութեան մուտքը Հայաստան եւ Վրաստան, «Գերբ կինը», Ս. Հոբիպիմէ եւ Ս. Նունէ, Պատմական ուսումնասիրութիւն ազգիւրներու քննութեամբ: Գերմաներէն ամփոփոյթով: Վրեննա, Միւրիթ. տպ., 1949, 8<sup>թ</sup>, էջ ԺԲ + 348: Գինն՝ 5 զ. Փր.: [Ազգ. Մատ. ՃԾԹ:]

Անէմեան Վ., Քոնյաի փողոց (Պատմուածքներ): Իսթանպուլ, 1949, 8<sup>թ</sup>, էջ 192:

Անայիս (Եւփիմէ Ասետիսեան), Յուշերս: Փարիզ 1949, 8<sup>թ</sup>, էջ 349: Գինն՝ 350 Փր.:

Անդրեանեան Տիրան, Լաֆօնթէնի Առակներ: Յուշեր ու նիշեր: Իսթանպուլ, տպ. Արբահամեան, 1950, 8<sup>թ</sup>, էջ 176: Գինն՝ \$ 1.—:

Արթուր Օ., Կալուօշ Երզնիական տարեգրք. Գ. տարի 1949 միացած «Միմոս» տարեգրքին հետ: Իսթանպուլ, տպ. (Ազի՞ն), 1949, 4<sup>թ</sup>, էջ 64: Գինն՝ 250 զրշ.:

Արմէն Ք. Հրանդ, Մեծն Տիգրան: Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Կիլիկիոյ, 1947, 8<sup>թ</sup>, էջ 207: Գինն՝ \$ 2.—:

Արշակ Զարեհ, Կալուօշի տարեգրքը 1948: Իսթանպուլ, տպ. Wadik, 1948, 8, էջ 112: Գինն՝ 200 զրշ.:

Արփի Գաշմանեան, Պատի Օրացոյց 1950, Նիւ Եորք:

Աւագեան Լեւոն, Միմոս, Երզնիական տարեգրք: Իսթանպուլ, Գ. տարի, տպ. Ազի՞ն, 1948, 8<sup>թ</sup>, էջ 96: Գինն՝ 250 զրշ.:

Ե. տարի միացած «Կալուօշ» տարեգրքի Գ. տարւոյն հետ, տպ. (Ազի՞ն), 1949, 4<sup>թ</sup>, էջ 64: Գինն՝ 250 զրշ.:

Զ. տարի, տպ. Ազի՞ն, 1950, 8<sup>թ</sup>, էջ 96: Գինն՝ 250 զրշ.:

Բաբլոյան Առաքել, [Պատի] Օրացոյց «Երկիր» 1950: Թէհրան, տպ. «Իրանշահ», 1949: Գինն՝ 30 ռիալ:

Գառնիկ Թ., Հայ Մաքին Թափօրը: Յիշատակարան եւ փառարանութիւն Հայ Մաքին: Նամակ Հ. Ս. Տէր Մովսէսեանի: Պարիս, տպ. Արաքս, 1949, 8<sup>թ</sup>, էջ 85 + Ե: Գինն՝ \$ 1.—: 13 Rue Saint-Sulpice, Paris 6<sup>e</sup>.

Գարամանեան Գալիք, Հայրենի տեսիլքներ: Պուէնոս Այրէս, 1949, 8<sup>թ</sup>, էջ 159: Գինն՝ \$ 1.—:

Գեղարդ Յ., Օտար երգիքներու տակ: Պէյրուս, տպ. Համազգային, 1950, 8<sup>թ</sup> էջ 107:

Գիրք Մատուցման եւ հատուցման, Յուլամատեան, Արամ Երկանեանի: Լուս Անճճէլէս, տպ. Պայքար, 1949, 8<sup>թ</sup>, էջ 160: Գինն՝ \$ 2.—:

Գուլումեան Յակոբ, Ահա քեզի Ամերիկան, Իրավէպ, Հատոր Ա.: Պոսթոն, տպ. Պայքար, 1949, 8<sup>թ</sup>, էջ 576: Գինն՝ \$ 2.—:

— — Արեւնոտ անապատ, իրական կեանքէ: Պոսթոն, տպ. Պայքար, 1949, 8<sup>թ</sup>, էջ 469: Գինն՝ \$ 3.—:

Գեղվիշ, Օմար Սայամ: Շտուտգարտ 1946, 8<sup>թ</sup>, թղ. 12 (նկարներ):

Երեմեան Արամ, Եարալի Նոր-Չուլայի Ժողովրդական պարերգը, Բ. տպագրութիւն: Թէհրան [1949<sup>թ</sup>], 4<sup>թ</sup>, էջ 11: [«Հայ Երգ»ի մատենաշար Հովիկ Էղզարեանի Թ. 1:]

— — Կասանդրա: Պատկեր իրական կեանքից: Իսթանպուլ, տպ. Մ. Տէր Սահակեան, 1949, 8<sup>թ</sup>, էջ 40: [Մատենաշար «Մարմարա» Թ. 2:] Գինն՝ 100 զրշ.:

— — Բանդակազորուհի Այծեֆնիկ Ուրարտու: Թէհրան, տպ. Մողերն, 1948 8<sup>թ</sup>, էջ 48: Գինն՝ 15 ռիալ: